ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐԵՐՈՒՄ

КОММУНИСТ

1966, № 3

Ամսագիրը բացվում է «Ընդամյակը սովետական հասարակության հետագա առաջադիմություն է» առաջնորդողով։ Մատնանշելով նոր ընդամյակի կարևոր նշանակությունը կոմունիզմի կառուցման ներկա ժամանակաշրջանում, հոդվածում ընդգծվում է, որ Սովետական Միության տնտեսական առաջընթացը բարձրացնում է նրա միջազգային հեղինակությունը, նպաստում է համաշխարհային սոցիալիստական համագործակցության, միջազգային կոմունիստական շարժմանը, դրական ազդեցություն գործում ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վրա։

Կոմունիստական հասարակության կառուցումը նոր մարդու ձևավորման ու դաստիարակման ուղղությամբ առաջ է քաշում սոցիալական, աշխարհայեցական, բարոյական և մեթոդոլոգիական կարևոր պրոբլեմներ։ Այդ տեսակետից արժեքավոր է փիլիսոփայական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Մ. Պետրոսյանի «Սոցիալիստական հասարակությունը և անձը» հաղորդումը։ Հեղինակը «սոցիալիստական հասարակության և անձի միասնությունը, հասարակական և անձնական շահերը», «անձի բազմակողմանի ներդաշնակ զարգացումը՝ կոմունիզմի նպատակն է», «Անձի սոցիալական պատասխանատվությունը» պլանով հաղորդման մեջ արծարծում է կոմունիստական հասարակության կառուցման սոցիոլոգիական բազմաթիվ հարցեր։

Հետաքրքրություն է ներկայացնում Վ. Պուգաչևի «Օպտիմալության պրոբլեմը ժողովրդական տնտեսության մեջ» դիտական հաղորդումը։ Հեղինակը քննության է առել այնպիսի հարցեր, ինչպիսին են՝ ժողովրդա-տնտեսական օպտիմալության չափանիշը, ժողովրդա-տնտեսական օպտիմալության իրացման սկզբունքները, ճյուղային օպտիմալ պլանավորման հարցերը, դների կառուցվածքը և աշխատողներին շահագրգռելը։

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС

1966, № 3

Ամսագրում տպագրված են Վ. Վ. Պլատկովսկու «Տեսության և պրակտիկայի միասնությունը ՍՄԿՊ գործունեության կարևորագույն սկզբունքն է», Ա. Ի. Մալիշի «Հեղափոխական մրցքի մեծ հարստությունը», Ա. Ա. Իսկենդերովի «Զարգացող երկրները և նեոգաղութատիրությունը» հոդվածները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում կուսակցության պատմության տվյալ հարցերի լայն լուսաբանման ուղղությամբ։

«Հաղորդումներ» բաժնում հրապարակված են Ս. Ի. Իլկինայի «Ազգային հանրապետությունների և մարզերի պատասխանատու աշխատողների հետ ՌԿ(բ)Կ ԿԿ խորհրդակցության (1918—1923 թթ.) պատմության շուրջը», Յու. Վ. Հարությունյանի «Քսանական թվականների գյուղում սոցիոլոգիական հետազոտման փորձից», Ն. Պ. Շարապովի «Ուրալում սոցիալիստական շինարարության մեջ արտասահմանյան բանվորների և մասնագետների մասնակցության մասին (1930—1934 թթ.)» հաղորդումները։

Հետաքրքիր նյութեր են տպագրված նաև ամսագրի «Կոնսուլտացիա», «Մարդիկ, իրադարձություններ, փաստեր», «Նամակներ և թղթակցություններ», «Պատմագրություն և աղբյուրագիտություն», «Դրախոսություն և քննադատություն», «Դիտական կյանք» և այլ բաժիններում։

ВОПРОСЫ ФИЛОСОФИИ

1966, № 2 и 3

Ամսագրի այս տարվա երկրորդ համարը բացվում է Մոսկվայի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ավագ գիտական աշխատակից, դոցենտ Ս. Տ. Կալտախչյանի «Սոցիալիզմի երկրների տնտեսական համագործակցությունը և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի զարգացումը» հոդվածով։ Հարուստ փաստերի հիման վրա հոդվածագիրը վերլուծման է ենթարկում սոցիալիստական երկրների տնտեսական համագործակցությունը, ցույց է տալիս այն պրոցեսները, որոնք առաջ են բերում նոր ինտերնացիոնալ ընդհանրություններ սոցիալիստական ազգերի և ժողովուրդների մեջ։

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ա. Ֆ. Շիշկինի «Գիտնականի էթիկայի մասին» հոդվածում քննադատության են առնված գիտնականի էթիկայի հարցերը։ Մասնավորապես լուսաբանված են գիտնականի էթիկայի առավել էական գծերը, ուշադրության են առնված գիտության զարգացման պատմական փորձը, հատկապես հասարակության մասին մարքս-լենինյան գիտության հիմնադիրների գործունեությունը։

Հետաքրքրություն են ներկայացնում Ա. Կ. Ուլեդովի «Հասարակական գիտակցության վիճակի մասին», Ա. Ա. Մարկի (Խարկով) «Մարքսիստական փիլիսոփայության միասնությունը», Վ. Ե. Գուսևի (Լենինգրադ) «Էսթետիկական իդեալը ֆոլկլորում», Ի. Ա. Խասանովի «Ժամանակի և տարածության երկու կոնցեպցիաները», Ա. Ռ. Պոդնևրի «Իդեաների տրամաբանական ասպեկտի մասին», Է. Ս. Մարգարյանի (Երևան) «Լենինի և Ուայտի կուլտուրոլոգիական տեսությունը և պատմական մատերիալիզմը», Վ. Ս. Նվիրևի «Տեսական և էմպիրիկ գիտության հարաբերության պրոբլեմը և ժամանակակից նեոպոզիտիվիզմը», Մ. Տ. Ստեփանյանից «Իսլամական էթիկան» և նրա սոցիալական միտքը», Պ. Վ. Տավանեցի «Գիտական իմացության պրոբլեմի մշակման հիմնական ուղղությունների մասին» հոդվածները։

Ամսագրի երրորդ համարը սկսվում է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ն. Գ. Նիկոլաևի «Գիտության դերը սոցիալիստական հասարակարգում» հոդվածով։ ՍՄԿՊ XXIII համագումարը որոշելով նոր հնգամյակի գլխավոր տնտեսական խնդիրները, ընդգծեց, որ հասարակական արտադրության հուժկու զարգացումը, նրա էֆեկտիվության, աշխատանքի արտադրողականության բարձրացումը կիրականացվեն միայն ժամանակակից գիտության ու տեխնիկայի նվաճումների հիման վրա։ Հեղինակը անդրադառնալով կոմունիստական շինարարության հետագա զարգացման գործում գիտության կարևոր դերին, ընդգծում է, որ անցյալի և ներկայի փորձից ելնելով, գիտությունը պրակտիկ կերպով լուծում է այնպիսի պրոբլեմներ, որոնք հսկայական դեր են խաղում հասարակության կյանքում, կոմունիստական շինարարությունում։

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՍՍՌՄ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի պատմական մատերիալիզմի սեկտորի վարիչ Վ. Ժ. Կելլեն իր «Սոցիալիզմի զարգացման մի քանի հատկանիշները» հոդվածում քննարկում է սոցիալիստական հասարակության մի շարք կարևոր սոցիոլոգիական հարցեր, ինչպես, օրինակ՝ պատմական զարգացման նոր տիպի գոյացումը, ապրանքային արտադրության բնույթը և սոցիալական ֆունկցիան սոցիալիզմի ժամանակ, անձնական նյութական շահագրգռվածության սոցիոլոգիական տեսակետը։

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ի. Ի. Վինոգրադովի «Արվեստի «երկրորդ ռեալականությունը» և ժամանակակից էսթետիկական առասպելաբանությունը», Ա. Ս. Բոգոմոլովի «Իդեալիստական դիալեկտիկան XX դարում», Ռ. Ֆ. Պորշնևի «Հնարավո՞ր է այժմ գիտական հեղափոխություն պրիմատոլոգիայում» և այլ հոդվածները։